պահատ արար Թագաւորն գրանս իւր, պատրաստեցաւ ՚ի պատերազմ (1187)։ Տե՛ս Նե՛ ՚ի Գէո՛ վ.բդ՛ն՛ոյ. Ցերե՛ 176։

Եհան հրամարտակ Սուլթանն ընդ ամենայն երկիր իշխանութեան իւրոյ եւ հրաւիրեաց զԻսլամս գալ ժողովիլ ՚ի Նիքդոյ դրաչու Ս. Պատերազմին։ Գրեաց և առ որդին իւր Մէլիք Աֆտալ ելանել դնդաւ իւրով ՚ի կողմանս Տիբերական ծովուն, լրտեսել զերկիր քրիստոնէից, և դուռնորել զհրաւիրեալ զօրան։ Եւ ինքն դէմ եղեալ գնաց ՚ի կողմանս Քերեքայ, և խնամարկեալ ուխտաւորացն Իսլամայ, առաքեաց զնոսա մինչ ՚ի կղզին Արաբացւոց, և ապա դարձաւ ՚ի վերայ Քերեքայ ՚ի ձեռս ածել զիշխանն, որ եղեւ առիթ եղծանելոյ գաշինն. աւարն եւս զքաղաքն և զերեայց զրաւումն, այլ ոչ կարաց ըմբռնել զիշխանն, որ ամրացեալ էր ՚ի բերդն անառիկ՝ չինեալ ՚ի գլուխ լերին հառեալ ՚ի ժայռէ. Թէպէտ եւ պաշարեալ զայն աշխատա եղեւ ամենօրեայ ժամանակաւ, այլ ամրութիւն տեղւոյն ձեռնթափ արար զնա ՚ի գործոյ։ Զանցս Քերեքայ անցոյց նաեւ ՚ի Շավկէք. անդ հասին առ նա եւ զօրքն Եգիպտական։ Մէլիք Աֆտալ կատարեալ զգործ իւր եհաս ՚ի Տիբերիա, և անտի ՚ի Սուֆուրեայ. ընդդէմ ելին Լատինք, բայց վհատեցան, եւ ոմանք եւս անկան գերի։ Զաւ արարեալ Սալահատտինի ՚ի կողմանց անտի եհաս առ որդին իւր՝ և եղեն բանակ մեծ. և ձեռն արկ պաշարել զքաղաքն Տիբերիա, չինեալ յեղր համանուն ծովուն, եւ կանգնեալ զմեքենայս սկսաւ հարկանել զպարիսպն. բրել և հանել զմեծամեծ քարինս ՚ի հիմանց նորին և ՚ի դիշերին յայնմիկ կործանեցին զմի կողմն պարսպին եւ ղեղան ՚ի Նիքդս։ Լուր առնուն Տիբերեայ և պետքն Թիբեր ահագին բանակին Սալահատտինի զդրդեալ զքաղաքն Երուսաղէմ. պատրաստեցան և ինքն Գուիտոն Թագաւորն կոչեալ զամենայն իշխանս Լատինաց, զումարեցաւ զամենայն զօրս ընդ հեծեալ եւ ընդ հետեւակ իբրեւ 50,000 ըստ հաշուի Արաբացւոց, և եղեն բանակ մեծ. խառնեցաւ ընդ նոսա եւ Հերակլիոս Լատին Պատրիարգն Երուսաղէմի հանդերձ եկեղեցական դասուք, բարձեալ ընդ ինքեանս եւ զխաչափայտան Քրիստոսի, և չու արարեալ գնացին ՚ի վերայ Թշնամեաց իւրեանց. խորհէին նախ